

Այս նպատակով անհրաժեշտ է պատրաստել համապատասխան կադրեր, որոնք կմասնագիտանան ԱՏԳ ապահովագրությունում:

- Պետությունը պետք է աջակցի ապահովագրության զարգացման գործընթացին և ապահովի ոլորտը պատշաճ իրավական դաշտով, իրականացնի հատկապես ԱՏԳ ապահովագրության զարգացման համար անհրաժեշտ միջոցառումներ:

ԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Եվրոպական կրթական տարածաշրջանային
ակադեմիայի տնտեսագիտության ամբիոնի դասախոս

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԸՆԴԱՅՆՄԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Շրջակա միջավայրի պաշտպանությունը և բնական միջավայրի բնականոն վերարտադրության ապահովումը չափազանց մեծ կարևորություն են ներկայացնում հասարակության զարգացման տեսանկյունից: Միաժամանակ, պետք է նշել, որ տվյալ խնդրի լուծումը ենթադրում է անհրաժեշտ տնտեսական, ֆինանսական և այլ ռեսուրսների ներգրավում: Այդ խնդիրն առավել մեծ սրությամբ է արտահայտվում հատկապես անցումային տնտեսությամբ երկրներում, որոնցում, մի կողմից, բնապահպանական անհրաժեշտ վերահսկողության, արտադրության ոլորտում կիրառվող տեխնոլոգիաների մաշվածության և մի շարք այլ գործոնների հետևանքով, իսկ մյուս կողմից, ֆինանսական միջոցների սղության պատճառով բնապահպանության ոլորտում գոյություն ունեցող հիմնախնդիրները հնարավոր չէ ամբողջական և համալիր կերպով լուծել: Բնականաբար, նման իրավիճակում առաջին պլան է մղվում բնապահպանական տեսանկյունից առաջնահերթությունների սահմանումը, առկա բյուջետային միջոցների նպատակային և արդյունավետ օգտագործումը, ֆինանսավորման այլ աղբյուրների ներգրավումը և գոյություն ունեցողների հնարավորությունների ընդլայնումը: Այս առումով, ինչպես ցույց են տալիս վերլուծությունները, Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացումը առաջիկա տարիներին շարունակելու է ունենալ տեխնածին բնույթ, և այդ առումով հանրապետությունում առկա բնապահպանական հիմնախնդիրների լուծումը բարդանալով՝ ավելի ծախսատար է դառնալու: Եթե հաշվի առնենք այն փաստը, որ ներկայումս հանրապետության շրջակա միջավայրի պահպանության համար անհրաժեշտ ֆինանսավորման ծավալը բավականաչափ ծանր է, ապա ակնհայտ է դառնում, որ առաջիկայում հասարակությունից, պետությունից, տեղական ինքնակառավարման մարմիններից ու տնտեսավարող սուբյեկտներից պահանջվելու է լրացուցիչ բնապահպանական միջոցառումների ու ծախսերի կատարում:

Պետք է նշել, որ չնայած վերջին տարիներին բնապահպանական միջոցառումների իրականացման համար հավաքագրվող պետական բյուջեի եկամուտների ծավալների զգալի աճին, հանրապետությունում դեռևս թույլ է տնտեսական մեխանիզմների կարգավորիչ դերը շրջակա միջավայրի աղտոտման ծավալների նվազեցման հարցում, չի ձևավորված համապատասխան իրավական և կառուցվածքային այնպիսի համակարգ, որը հնարավորություն կընձեռներ բնօգտագործման և բնապահպանական վճարների գծով հավաքագրվող ֆինանսական միջոցները ամբողջովին նպատակաուղղել հանրապետությունում առկա, առաջնահերթ իրագործման կարիք ունեցող բնապահպանական հիմնախնդիրների լուծմանը նպատակաուղղված միջոցառումների ֆինանսավորմանը:

Բնապահպանական և բնօգտագործման վճարների արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է կատարելագործել բնական ռեսուրսների գնահատման մեթոդները:

Դրանց հիմքում պետք է ընկած լինի բնօգտագործման և բնապահպանական վճարների դրույքաչափերի մակարդակի համարժեքության ապահովումը օգտագործվող բնական ռեսուրսների և շրջակա միջավայրին պատճառվող վնասի իրական տնտեսական արժեքին: Բնապահպանության ոլորտում առկա խնդիրների լուծումը ենթադրում է բնապահպանական գործունեության ֆինանսավորման համապատասխան ռազմավարության մշակումը, ինչպես տարեկան, այնպես էլ միջին ժամկետ և երկարաժամկետ կտրվածքներով: Ակնհայտ է, որ բնօգտագործման և բնապահպանության ֆինանսատնտեսական մեխանիզմների կատարելագործման կարևորագույն տարրը պետք է շարունակի հանդիսանալ բնական ռեսուրսների վերարտադրության և բնապահպանական միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների կուտակման և ներգրավման ապահովումը: Այդ նպատակով առավելագույնս պետք է օգտագործվեն արտաքին աղբյուրների հաշվին բնապահպանական ծրագրերի ֆինանսավորման առկա հնարավորությունները: Նշված քայլերի իրականացման, ինչպես նաև բնօգտագործման տնտեսական մեխանիզմների և շրջակա միջավայրի պահպանության ֆինանսավորման համակարգի կատարելագործման արդյունքում կավելանան բնապահպանական և բնօգտագործման վճարների գծով պետական բյուջեի մուտքերը, նպաստավոր պայմաններ ստեղծելով հանրապետությունում բնապահպանական ծրագրերի և միջոցառումների ֆինանսավորման համար: Ընդհանուր առմամբ, կարծում ենք, որ հանրապետությունում բնապահպանական միջոցառումների ֆինանսավորման մեխանիզմների կատարելագործման գլխավոր նպատակը պետք է լինի տվյալ ոլորտի ֆինանսավորման ծավալների շարունակական ավելացումը՝ ձգտելով հասնել զարգացած երկրների ֆինանսավորման մակարդակին (ՀՆԱ-ի 2.0 տոկոսը): Միաժամանակ, կարևորվում է նաև բնապահպանական ծրագրերի և միջոցառումների իրականացման միջոցով, հանրապետության տնտեսության կայուն զարգացմանը զուգընթաց բնապահպանական կայուն իրավիճակի ապահովումը, հնարավոր առավելագույն չափով շրջակա միջավայրի՝ մթնոլորտի, ջրերի, հողի, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի վրա տնտեսական գործունեության վնասակար ներգործությունների կանխարգելումը և նվազեցումը:

Մեր կարծիքով, հանրապետությունում առկա բնապահպանական հիմնախնդիրները, ելնելով ֆինանսական հնարավորություններից, կարող են լուծվել միայն աստիճանաբար՝ հիմնականում երկրի տնտեսության զարգացմանը զուգընթաց, բնապահպանական ֆոնդերի ստեղծման միջոցով (ըստ էության, տվյալ խնդրի լուծմանն ուղղված յուրատեսակ մոտեցում էր «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի ընդունումը) և միջազգային հանրության (միջազգային բնապահպանական, ֆինանսական և այլ կազմակերպությունների) օժանդակությամբ՝ հաշվի առնելով հանրապետությունում առկա հիմնախնդիրների որոշակի մասի գլոբալ և տարածաշրջանային բնույթը: Այդ առումով, առավել պետք է կարևորվի Հայաստանի Հանրապետության մասնակցությունը բնապահպանական միջազգային կոնվենցիաներին:

Առաջիկա տարիներին Հայաստանի Հանրապետությունում բնօգտագործման բնագավառում տնտեսական մեխանիզմների և շրջակա միջավայրի պահպանության ֆինանսավորման համակարգի կատարելագործումը նպատակաուղղված պետք է լինի.

- բնական ռեսուրսների ռացիոնալ (բանական) օգտագործման և ռեսուրսաէներգախնայողական տեխնոլոգիաների կիրառման խթանմանը,
- բնառեսուրսային ենթակառուցվածքի՝ արդյունավետ գործունեության և վերականգնվող բնական ռեսուրսների համար անհրաժեշտ ֆինանսատնտեսական պայմանների ստեղծմանը:

Բնապահպանական գործունեության հիմնական նպատակը հանդիսանում է ոչ միայն ռացիոնալ բնօգտագործման և էկոհամակարգերի բնապահպանական նորմալ վիճակի ապահովումը, այլ նաև շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության բացասական հետևանք-

ների կանխարգելումը: Այս առումով, պետք է նշել, որ հանրապետությունում իրականացվող բնապահպանական քաղաքականությունը հիմնականում աչքի է ընկնում բնությանը հասցված վնասի փոխհատուցմանը և տնտեսական գործունեության բացասական հետևանքների վերացմանն ուղղված միջոցառումներով: Մակայն, ինչպես ցույց է տալիս այլ երկրների փորձը, ներկայումս տեղի է ունենում մասն մոտեցումների փոխարինում շրջակա միջավայրին հասցվող վնասի կանխարգելմանն ուղղված մոտեցումներով: Անշուշտ, դա ենթադրում է բնապահպանական գործունեության կառավարման տնտեսական լծակների դերի բարձրացում:

Ներկայումս հանրապետությունում գործող բնապահպանական գործունեության կառավարման մեթոդների համակարգը, ինչպես և այլ երկրներում, ներառում է ադմինիստրատիվ, շուկայական և տնտեսական մեթոդների համախումբը: Ադմինիստրատիվ մեթոդները հիմնված են սահմանափակումների, արգելքների և թույլտվությունների վրա, իսկ որպես լծակներ հանդես են գալիս վարչական և քրեական պատասխանատվության ենթարկելու մեխանիզմները: Շուկայական մեթոդները հիմնված են առաջարկի և պահանջարկի, համապատասխանաբար մաս բնական ռեսուրսների օգտագործման իրավունքի ձեռքբերման գնագոյացման վրա: Շուկայական մեխանիզմների օգնությամբ բնօգտագործման օպտիմալացման համար, ինչպես ցույց է տալիս համաշխարհային փորձը, բնապահպանական քաղաքականության կարևոր խնդիր է հանդիսանում արտանետումների ծավալի կրճատումը:

Բնապահպանական ոլորտին ուղղվող ծախսերի, ինչպես մաս բյուջետային միջոցների ծավալի ավելացման նպատակով, կարծում ենք, նպատակահարմար է որոշակի կախվածություն սահմանել ձեռնարկության մաքուր շահույթի և բնապահպանական իրավախախտումների համար սահմանվող տուգանքների չափի միջև, մասնավորապես, 10-15 տոկոսի չափով: Որպես սկզբունք պետք է սահմանվի այն, որ այդ վճարումների չափը պետք է էական ազդեցություն ունենա ձեռնարկության տնտեսական գործունեության արդյունքների վրա:

Շուկայական տնտեսության պայմաններում առանց շրջակա միջավայրի պաշտպանության և ռացիոնալ բնօգտագործման խթանման տնտեսական մեխանիզմի ստեղծման գրեթե բացառվում է տվյալ ոլորտներում հաջողությունների արձանագրումը: Նշված մեխանիզմն իր մեջ պետք է ներառի ինչպես տնտեսապես հիմնավորված բնապահպանական հարկերի, այնպես էլ բնապահպանական նշանակության սարքավորումների համար արագացված ամորտիզացիայի կիրառումը: Ջարգացած երկրներում արագացված ամորտիզացիայի կիրառումը հնարավորություն տվեց կուտակել կապիտալ բարոյապես և ֆիզիկապես մաշված տեխնոլոգիաները նորերով փոխարինելու համար՝ նպաստելով շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության մեղմմանը:

Հանրապետությունում շրջակա միջավայրի պաշտպանության, բնապահպանական իրավիճակի կայունացման նպատակով արդյունավետ տնտեսական և ֆինանսական միջոց կարող է հանդիսանալ բնապահպանական ձեռնարկատիրության զարգացումը և դրա համակողմանի խթանումը, որի հիմքը պետք է հանդիսանա բնապահպանական բիզնեսի առանձնահատկությունները հաշվի առնող հատուկ ֆինանսատնտեսական մեխանիզմը: Վերջինիս մեջ պետք է ընդգրկվեն էկոլոգիական զարգացման բանկերը, բնապահպանական անկախ փարձաքննությունը, բնապահպանական ռիսկի ապահովագրության ընկերությունները, բնապահպանական գործունեության խնդիրների լուծմամբ զբաղվող հասարակական միավորումները:

Հանրապետությունում բնապահպանական գործունեության կառավարման հեռանկարային մեթոդ պետք է հանդիսանա բնապահպանական մենեջմենթի արդյունավետ համակարգի ներդրումը, որի դերը հանդիսանում է բնապահպանական որոշումների հիմնավորված ընտրության մեջ: Բնապահպանական մենեջմենթի էությունը կայանում է տնտեսության և էկոլոգիայի միջև գոյություն ունեցող հակասությունների հարթման, բնապահպանական միջոցառումների և արտադրության զարգացման համատեղման մեջ: Ակնհայտ է, որ ձեռնարկության մակարդակով

մման գործառնությունների իրականացումը ենթադրում է հատուկ մասնագիտական պատրաստվածություն, կառուցվածքային օպտիմալ համակարգի գոյություն, ստորաբաժանումների միջև համակարգված համագործակցության ապահովում:

Կայուն զարգացման ապահովման կարևորագույն հիմքերից մեկը հանդիսանում է շրջակա միջավայրի պահպանության և բնօգտագործման կառավարման արդյունավետ համակարգի ստեղծումը, հիմնված միջազգայնորեն համընդհանուր ճանաչում ստացած սկզբունքների և մեխանիզմների վրա, որը կապահովի երկրի տնտեսության և սոցիալական ոլորտի էկոլոգիապես հավասարակշռված զարգացումը: Հանրապետությունում վերջին տարիներին նկատվող տնտեսական առաջընթացը, անխուսափելիորեն հանգեցնելու է բնապահպանական նոր հիմնախնդիրների առաջացմանը և գոյություն ունեցողների խորացմանը, պահանջելով դրանց լուծման համար նոր տնտեսումների կիրառում և իրականացվող քաղաքականության վերախմաստավորում: Դրան զուգահեռ, վերջին տասնամյակում հանրապետության տնտեսության կառուցվածքային վերափոխումները, հիմնական ֆոնդերի մշակման ապագայում, բնապահպանական ռիսկերի խորացումը և մի շարք այլ գործոններ պայմանավորում են շրջակա միջավայրի վրա տնտեսական գործունեության բացասական հետևանքների ավելացումը: Ակնհայտ է, որ սոցիալ-տնտեսական նոր իրողությունների և տնտեսավարման ներկա պայմաններում պետության հակազդեցությունը բնապահպանական սպառնալիքներին ու վտանգներին պետք է կրի որակական փոփոխություններ: Այս առումով, ներկայումս առաջին պլան է մղվում բնօգտագործման ռացիոնալացման և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության կանխարգելման և նվազեցման գիտականորեն հիմնավորված ռազմավարության մշակումը և հետևողականորեն իրականացումը, որն իր մեջ կներառի բնապահպանական գործունեությունը և բնօգտագործումը կարգավորող տնտեսական և այլ մեխանիզմների արդյունավետ գործունեությունը ապահովող իրավական հիմքերը: Այդ կապակցությամբ պահանջվում է նպատակային աշխատանքների իրականացում տնտեսաէկոլոգիական կանխատեսման մեթոդների և բնապահպանական ծրագրերի ու միջոցառումների մշակման և իրականացման մեխանիզմների կատարալեզործման ուղղություններով: Լուրջ կատարելագործման անհրաժեշտություն է զգում շրջակա միջավայրի պահպանության և ռացիոնալ բնօգտագործման ոլորտներում ներդրումային գործունեության խթանումը, ներառյալ հարկային և այլ արտոնությունների տրամադրումը նորագույն տեխնոլոգիաների ներդրման, ինչպես նաև առաջնահերթ բնապահպանական հիմնախնդիրների լուծման կազմակերպման առաջադեմ ձևերի կիրառման, այդ թվում նաև պետական և մասնավոր հատվածների միջև գործընկերության խորացման, մասնագիտացված ներդրումային հիմնադրամների և այլ միջոցներով: Անհրաժեշտ է լուրջ քայլեր իրականացնել նաև ֆինանսական վարձակալության (լիզինգի) մեխանիզմների մշակման, բնապահպանական գործունեության վարկավորման կատարելագործման, բնապահպանական ռիսկերի կառավարման քաղաքականության ձևավորման՝ ներառյալ բնապահպանական ապահովագրության համակարգի ներդրման ուղղություններով: Ակնհայտ է, որ բնապահպանական գործոնների բացասական հետևանքների չեզոքացման համար պահանջվում է շրջակա միջավայրի պահպանության և բնօգտագործման ոլորտների ինստիտուցիոնալ կառուցվածքի զարգացում: Վերջինիս հիմնական խնդիրներից մեկը պետք է հանդիսանա պետության և տնտեսավարող սուբյեկտների միջև պատասխանատվության տնտեսապես հիմնավորված բաշխումը: Մեր կարծիքով, նպատակահարմար է նաև հանրապետությունում բնապահպանական և տնտեսական կարգավորման առաջադեմ մեթոդների ներդրումը և կատարելագործումը, այդ թվում նաև արտանետումների և թափոնների քվոտավորման արդյունավետ մեխանիզմների ստեղծումը:

Հարկ է նշել, որ տնտեսական զարգացման ներկա փուլում տնտեսավարող սուբյեկտների գործունեությունը հանդիսանում է շրջակա միջավայրի աղտոտման հիմնական պատճառներից մեկը, որի ծավալները պայմանավորված են հիմնական ֆոնդերի վիճակով և էկոլոգիական

առումով անվտանգ տեխնոլոգիաների առկայությամբ: Այս տեսանկյունից խիստ կարևորվում է արտադրության գործընթացում մնան տեխնոլոգիաների ներդրումը, որի ապահովման գործում զգալի դերակատարում կարող է ունենալ ֆինանսավարկային համակարգը: Կարծում ենք, հանրապետությունում բնապահպանական մի շարք հիմնախնդիրների լուծման համար կարող է նպատակահարմար լինել էկոլոգիապես անվտանգ տեխնոլոգիաների և արտադրական այլ միջոցների ձեռք բերման նպատակով արտոնյալ վարկային ռեսուրսների տրամադրումը, ինչպես նաև ֆինանսական լիզինգի արդյունավետ գործող համակարգի ներդրումը: Ինչպես ցույց է տալիս այլ երկրների փորձը, հատկապես մնան տեխնոլոգիաների ներդրման նպատակով պետության կողմից ցուցաբերվում են աջակցության տարբեր մոտեցումներ, որոնք կարող են դրսևորվել ինչպես հարկային, այնպես էլ ֆինանսավարկային խթանների տեսքով:

Բնապահպանական հիմնախնդիրների առանձնահատկությունը կայանում է մասնաճյուղում, որ դրանց հետևանքներն իր վրա է զգում ամբողջ հասարակությունը՝ դրանց լուծմանը հաղորդելով համապետական նշանակություն: Սակայն, դրանից չի հետևում, որ բնապահպանական գործունեությունը պետք է ամբողջությամբ ֆինանսավորվի պետական միջոցների հաշվին: Դա պետք է հանդիսանա ֆինանսավորման աղբյուրներից մեկը, ընդ որում՝ ոչ գլխավորը: Այս գործընթացում պետության դերակատարությունը պետք է հիմնականում կայանա այնպիսի մեխանիզմի ստեղծման մեջ, որը կապահովի բնապահպանական հիմնախնդիրների լուծումը ոչ պետական աղբյուրների հաշվին: Հանրապետության, ինչպես նաև այլ երկրների փորձը և ցույց է տալիս, որ բյուջետային միջոցների ծավալը բավարար չէ բնապահպանական հիմնախնդիրների լուծման համար: Ակնհայտորեն, պահանջվում են մասնաճյուղից այլ աղբյուրներ, որոնց ներգրավման համար անհրաժեշտ խթանների ձևավորմանն էլ պետք է ուղղված լինի պետական բնապահպանական քաղաքականությունը: Բացի այդ, պետության խնդիրն է այնպիսի պայմանների ստեղծումը, որոնք կնպաստեն տնտեսավարող սուբյեկտների կողմից ֆինանսական որոշումների կայացման վրա բնապահպանական գործունեության արդյունավետ ներգործությանը:

Ըստ էության, պետության կողմից բնապահպանական հիմնախնդիրների լուծման համար անմիջական ֆինանսական օժանդակության ցուցաբերումը կարող է տեղի ունենալ ինչպես բնապահպանական հարկերից և վճարներից ստացվող մուտքերի նպատակային կենտրոնացման և օգտագործման (հիմնականում բնապահպանական ֆոնդերի ստեղծման միջոցով), այնպես էլ ընդհանուր բյուջետային եկամուտներից համապատասխան հատկացումներ կատարելու միջոցով:

Չնայած այն հանգամանքին, որ բնապահպանական հիմնախնդիրների լուծման համար բյուջետային միջոցները բավարար չեն, այնուհանդերձ, դրանք կարևոր դեր են գրավում ընդհանուր ֆինանսավորման ծավալների մեջ: Դրանք ձևավորող աղբյուրների շարքում, անշուշտ, իրենց կարևորությամբ առանձնանում են բնապահպանական վճարները: Այս առումով, հատկապես կարևորվում են դրանց դրույքաչափերի օպտիմալ սահմանումը, որոնք, տնտեսապես հիմնավորված լինելուն միաժամանակ, պետք է հաշվի առնեն մասնատնտեսավարող սուբյեկտների ֆինանսատնտեսական դրությունը: Վերջիններիս չափը պետք է այնպես սահմանվի, որ բավարար լինի դրանք վճարող սուբյեկտների կողմից բնապահպանական միջոցառումների իրականացումը խթանելու համար: Բնապահպանական վճարները պետք է դառնան ծախսային լուրջ տարր շրջակա միջավայրին վնաս հասցնող ձեռնարկության համար: Միայն այն դեպքում, երբ բնապահպանական գործունեությունը ուղղակիորեն կազմի ձեռնարկության շահույթի վրա, կխթանի նրան ձեռնարկել լուրջ միջոցներ համապատասխան տեխնոլոգիաներ ներդնելու ճանապարհով բնապահպանական միջոցառումներ իրականացնելուն: Այլ կերպ ասած, բնապահպանական վճարները պետք է սահմանվեն այնպես ու այն չափով, որ ձեռնար-

կությանն ավելի շահավետ լինի իրականացնել բնապահպանական միջոցառումներ, քան համապատասխան վճարներ վճարել շրջակա միջավայրին հասցված վնասի համար:

Ակնհայտորեն, շրջակա միջավայրի պաշտպանության ուղղությամբ միջոցառումների արդյունավետ իրականացման նախապայմաններից մեկն է հանդիսանում համապատասխան իրավական նախադրյալների ձևավորումը: Այս առումով պետք է նշել, որ տնտեսական հարաբերությունների զարգացման հետևանքով ներկայումս հանրապետությունում գործող իրավական ակտերից շատերը կորցրել են իրենց արդիականությունը, առաջացել են որոշ հակասություններ դրանց միջև, ինչպես նաև առկա են որոշ բացթողումներ: Այս առումով, խիստ կարևորվում է բնապահպանության ոլորտի իրավական և մեթոդական հենքի կատարելագործումը, առանձնակի ուշադրություն դարձնելով բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման համար պահանջվող նորմերի ու կանոնների, այդ թվում՝ սահմանափակումների սահմանման դեպքում իրատեսական հիմնավորումների ապահովման վրա:

ԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

*Եվրոպական կրթական տարածաշրջանային
ակադեմիայի տնտեսագիտության ամբիոնի դասախոս*

ԲՆԱՊԱՀԱՊԱՆԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱԿԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԼՅԱԿՆԵՐԸ

Շրջակա միջավայրի պաշտպանության հիմնախնդիրները կարող են առավել մեծ արդյունավետությամբ լուծվել միայն պետության անմիջական մասնակցության և պետական հիմնավորված ու արդարացված միջամտության պարագայում: Ընդ որում, գոյություն ունեն պետական միջամտության մի քանի ձևեր, որոնց օգնությամբ պետությունը կարգավորում է տնտեսական համակարգում տեղի ունեցող մի շարք գործընթացներ: Բնապահպանության ոլորտում ծագող հարաբերությունների կարգավորումը կարող է իրականացվել տարբեր մակարդակներում՝ քաղաքականության մշակումից մինչև տարաբնույթ նախագծերի իրականացում: Բացի այդ, պետությունն ինքը կարող է անմիջական մասնակցություն ունենալ շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված տարբեր նախագծերի իրականացմանը:

Մշակելով և իրականացնելով բնապահպանական քաղաքականություն, պետությունը հետապնդում է տնտեսավարող սուբյեկտների վրա արդյունավետ ներգործության նպատակ: Նման քաղաքականությունը, ըստ էության, կարող է իրականացվել տարբեր եղանակներով, մասնավորապես, շրջակա միջավայրի համար վնասակար գործունեության տեսակների խիստ ռեժիմով հարկման, նմանատիպ գործունեությամբ զբաղվելու սահմանափակման և այլ միջոցներով:

Պետական բնապահպանական քաղաքականությունը հանդիսանում է սոցիալ-տնտեսական իրավիճակի կառավարման կարևոր գործիքներից մեկը: Մեր կարծիքով, պետական բնապահպանական քաղաքականության տակ պետք է հասկանալ քաղաքական, տնտեսական, իրավական և այլ հատուկ միջոցառումների համակարգ, որոնք ձեռնարկվում են պետության կողմից բնապահպանական իրավիճակի կառավարման և երկրի տարածքում տեղաբաշխված բնական ռեսուրսների արդյունավետ և ռացիոնալ օգտագործման նպատակով:

Բնապահպանական քաղաքականության առանձնացումը որպես պետական քաղաքականության առանձին տարր (ռազմական, մշակութային, տնտեսական, սոցիալական, գիտատեխնիկական, տեղեկատվական և պետական քաղաքականության մյուս ուղղությամբների հետ